ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Հ. Պետրոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԿԳՄՄՆ «Վ. Թեքեյանի անվ. Գյումրու №2 ավագ դպրոց» «ՊՈԱԿ»

12-րդ դասարան

Ղոչոյան Գոհար

« 2022 - 2023 » ուսումնական տարի

Դասարանի ընդհանուր բնութագիրը՝ 12ա դասարանում սովորում են 24 աշակերտներ՝ 12 տղա, 12 աղջիկ: Նախորդ ուստարում 21 աշակերտներ էին ուսանում դասարանում, 2022-2023ուստարում մեզ միացան ևս 3-ը՝ Ստեփանյան Ռոբերտ, Բաղալյան Տաթև, Սողոյան Միշա: Աշակերտները համերաշխ, կազմակերպված են, միմյանց նկատմամբ հանդուրժող, միմյանց հարգող : Ակտիվ մասնակցում են դպրոցական, քաղաքային, մարզային միջոցառումներին, օլիմպիադաներում դրսևորում բավականին լավ արդյունքներ: Դասարանում կա առողջ մրցակցություն: Սիրում են ազատ խոսել, կիսվել կարծիքներով, լսել միմյանց, առողջ բանավիճել: Շատ գովելի է, որ ոչ ոք իրեն մյուսներից վեր չի դասում, երբ պետք է, կարող են զիջել, իրենց կարծիքն այլոց չփաթաթել: Բանիմաց են, կարդացող, պրպտող ու գտնող: Նախորդ ուստարում ձեռքբերումները բավարար էին, չառաջադիմող աշակերտ չկար, լավ առաջադիմություն ու վարք դրսևորեցին 18, գերազանց՝ 3 աշակերտներ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ 12-րդ Ա ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ծննդյան օր
1.	Ադամյան Արամ Արտակի	08.05.2005
2.	Ասատրյան Ռուզաննա Գևորգի	04.12.2004
3.	Ավագյան Գարեգին Հարությունի	05.11.2005
4.	Ավետիսյան Սեդա Սերոբի	25.01.2005
5.	Եդիգարյան Անի Վահանի	19.02.2005
6.	Թումասյան Էլյա Կարենի	01.04.2005
7.	Խաչատրյան Վարդուհի Կարենի	21.08.2005
8.	Հովհաննիսյան Արփինե Հովհաննեսի	04.10.2004
9.	Հովհաննիսյան Մանուշակ Սուրենի	29.11.2005
10.	Միրզոյան Հայկ Վարդգեսի	29.07.2005
11.	Պապոյան Արեն Գրիգորի	25.10.2005
12.	Պողոսյան Սյուզի Արմենի	11.07.2005
13.	Սահակյան Լիլի Գուրգենի	08.06.2005
14.	Սահակյան Մարինա Արտյոմի	07.01.2005
15.	Սարոյան Հրաչյա Արշալույսի	07.08.2005
16.	Տեր-Ավագյան Էդգար Արմենի	25.03.2005
17.	Քոթանջյան Ռաֆայել Արայի	31.10.2005
18.	Ամիրյան Գեորգի Մերուժանի	13.09.2005
19.	Աբրահամյան Դավիթ Հարությունի	14.09.2005
20.	Հարությունյան Սուսաննա Ռոմանի	27.07.2005
21.	Մովսիսյան Կառլեն Մնացականի	06.12.2005
22.	Բաղալյան Տաթևիկ Վարդգեսի	28.09.2005
23.	Սողոյան Միշա Արմենի	07.02.2005
24.	Ստեփանյան Ռոբերտ Մնացականի	11.06.2005

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնա-դաստիարակչական աշխատանքներ՝

1. Աշխատանք աշակերտական կոլեկտիվի հետ

- Աշխատանք գեղագիտական, մշակութային, հոգևոր, ֆիզիկական, բարոյական դաստիարակության ուղղությամբ:
- Աշխատանք աշակերտների ինքնուրույն մտածողության զարգացման, տրամաբանության ուղղությամբ:
- Բացատրական աշխտանքներ աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի մասին. սիրել ու խնամել մարմինը, հոգ տանել վերջինիս մասին:
- Կազմակերպել միջոցառումներ, բաց-դասեր, էքսկուրսիաներ:
- Ուսման մեջ թերացող աշաերտների հետ խրատական զրույց տանել, ուղղորդել մասնագիտության ընտրության հարցում:

2. Աշխատանք ծնողների հետ

- Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ:
- Հնարավորինս մանրամասն ծանոթացնել աշակերտների առօրյային /դպրոցում և դպրոցից դուրս:
- Նախատեսվող մրցույթների, օլիմպիադաների, այլ բնույթի միջոցառումների համար նախապես տեղյակ պահել նաև ծնողներին:
- Հնարավորության դեպքում՝ մասնակից դարձնել ծնողներին դասարանական միջոցառումներին, էքսկուրսիաներին:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն/լսել աշակերտներին, լսել բոլորի կարծիքները, խոսել եկեղեցական տոների մասին և թե ի՞նչ տոներ են նշում աշակերտներն իրենց ընտանիքներում/շատերը նշում են սուրբ Ծնունդ, սուրբ Զատիկը, վարդավառը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն/ Ուղեկցել նկարիչների ցուցահանդեսների դիտման, ֆիլմերի դիտում կազմակերպել, դասարանում անցկացնել քննարկումներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն/ զրույցներ անցկացնել անկախության օրվա մասին, խոսել հայ հերոսներից, արարքներից և թե ո՞ր հերոսի մասին ի՞նչ են կարդացել: Իսկ ի՞նչ խորհուրդ կտան ընկերոջը կարդալու:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն/ սպորտ-դահլիճում, ֆիզկուլտուրայի ուսուցչի ակտիվ մասնակցությամբ, կազմակերպել ներդասարանական մրցույթներ: Զրուցել առողջ օրգանիզմի մասին, լսել ի՞նչ կարծիքներ ունեն աշակերտները ծխելու, թմրամիջոցների դեմ տարվող պայքարի միջոցների մասին. արդյո՞ք բավարար խիստ են, կա՞ կարիքն ավելի վերահսկելի դարձնելու,թե անձը գիտակցում է ի՞նչ է առողջ ապրելակերպն ու առողջ սերունդներ ազգին պարգևելը:

3.5 Բնապահպանական դաստիարակություն/ դասարանում ծաղիկների առկայություն, խնամք: Կազմակերպել ու մասնակցել քաղաքային իշխանությունների կոմից տարվող ծառատունկներին, դպրոցում ժամանակ առ ժամանակ կազմակերպվող ու անցկացվող «Մաքուր տուն,մաքուր դպրոց» ակցիային:

3.6 Մշակութային դաստիարակություն/ աշակերտները ճանաչում են հայ մշակութային գործիչներին, խոսել նրանց կյանքից, գործունեությունից: Ձևավորել ազգային և համաշխարհային մշակութային գործիչների կյանքի, ստեղծարար գործունեության նկատմամբ հարգանք, պատկառանք: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Լսել դասական հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, համաշխարհային ճանաչում ունեցող գործիչների ստեղծագործություններ: Ճանաչել հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը, ձևավորել մշակութային գրագիտություն ու ճաշակ:

3.7 Լեզվական գրագիտություն/ աշակերտները տիրապետում են մայրենի լեզվին, օտար լեզուներից՝ ռուսերենին, անգլերենին, խոսում են, արտահայտվում: Օգտագործել տեսողական, լսողական, թվային նյութեր՝ լեզուների իմացությունն ապահովելու համար, գրագետ ձևերով մեկնաբանելու, ստեղծագործ հայեցակարգեր առաջ քաշելու, մեկնաբանելու համար/ օգտվել նաև օտար լեզվի ուսուցչուհու ցուցումներից:

3.8 Ինքնաճանաչողական և սոցիալական կարողություններ/ աշակերտների համար ստեղծել իրավիճակային, խնդրահարույց պատմություններ ու դրանց լուծում տալ: Լսել ով ինչպես է ելք գտնում տվյալ իրավիճակից, առաջարկել սեփական տեսակետը, լսել ինչու՞ դա դուր եկավ կամ դուր չեկավ աշակերտներին: Սովորեցնել , որ անգամ վիճաբանության ժամանակ պետք է կարողանալ զուսպ լինել, չվիրավորել անձը, այլ գնահատական տալ արարքին: